



ՀԵՍԻՔԻՈՍ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅՈՒ ՄԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՃԱՌԸ (նվիրված Ս. Հովհաննես Մկրտչին)

Հեսիքիոս Երուսաղեմացու մասին մեր ունեցած կենսագրական տվյալները շատ քիչ են: Հայտնի է միայն, որ 412 թ. ձեռնադրվել է քահանա, իսկ 428—9 թ. մասնակցել է Երուսաղեմի Ս. Եվթիմոսի տաճարի օծման արարողությանը: Մահացել է հավանաբար 450 թ.-ից հետո: Կոչվել է «Եկեղեցու վարդապետ», «մեծ աստվածաբան»: Հույն Եկեղեցին Հեսիքիոսին պատվում է իբրև սուրբի և Երա հիշատակը տոնում մարտի 28-ին:

Ըստ ավանդության, Հեսիքիոսը մեկնել է ողջ Ս. Գիրքը: Նրա մեկնություններից, սակայն, շատ չընչին բան է մեզ հասել, որոնք հետևյալներն են.

1.—**Մեկնություն Ղևոնգվոց գրքի.** Փրկվել է 9 դարում կատարված լատիներեն թարգմանությամբ (PG 93, էջ 787—1180):

2.—**Մեկնություն Սաղմոսաց.** Հրատարակվել է Աթանաս Հայրապետի անվան տակ (PG 27, էջ 674—1344):

3.—**Մեկնություն Հորի.** Պահպանվել է միայն հայերեն թարգմանությամբ և հրատարակվել 1913 թ. Վենետիկում, Հ. Քերովյե Ա. Զրաքյանի աշխատասիրությամբ: Սույն հրատարակությունը կատարված է մի պակասավոր ձևագրից: Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի հմր. 8429 ձեռագիրը (էջ 3ա—257ա) պարունակում է սույն երկի ամբողջական տեքստը: Նույն Մատենադարանի 2 այլ ձեռագրեր (հմր. 1138, էջ 216բ—225բ, հմր.

1426, էջ 63ա—70բ) պարունակում են Հեսիքիոսի «Մեկնություն Հորի» աշխատության մի համառոտված խմբագրությունը:

4.—**Հատվածներ Ս. Գրքի զանազան գրքերի մեկնություններից:**

Հեսիքիոսի անունով մեզ են հասել նաև մի շարք ճատեր (որոնցից մեկը նաև հայերենով՝ «Հեսիքիոսի քահանայի Երուսաղեմի Յամենասուրբ Աստուածածինն և ի միշտ կոյսն Մարիամ» տպ. Մեկնություն Հորի երկի հետ միասին, էջ 293—303):

Ստորև հրատարակում ենք Հեսիքիոս քահանա Երուսաղեմացու մի նորահայտ ճառը, պահպանված միայն հայերեն թարգմանությամբ, որը նվիրված է Ս. Հովհաննես Մկրտչին:

Հրատարակվում է մեզ հասած միակ օրինակից՝ Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 5349 ձեռագրից (էջ 255բ—259ա), զբված ԺԳ դարում Թորոս քեն.-ի կողմից: Հիմնականում տեքստը պահպանված է նույնությամբ: Ուղղված է «է»—«ե»-ի, քառավորիցի «բ»-ի և «ա»—«օ»-ի ուղղագրությունը: Հատուկ անունների ուղղագրությունը պահպանված է նույնությամբ:

Գրաբար տեքստին կից հրատարակվում է նաև ճառի աշխարհաբար թարգմանությունը՝ կատարված եղևոր ճեմարանի գրաբարի դասախոս Երվանդ Մկրտչյանի կողմից:

ԵԶՆԻԿ ԲԱՀԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

255բ ԵՐԱՆԵՒՈՅՆ ԵՍԻՔԻ ԵՐԵՅՈՒ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՅՈՒ
ԱՍՈՒՏԵԱԼ Ի ՍՈՒՐԵՆ ՅՈՎԱՆԵՍ

Այսօր գմեղ Յովհաննես գուարճացեալս ուրախութեամբ ի խմբումն էամ տեւեանաց: Յովհաննէս՝ որ գտին ձայն, որ Բանին որոտումն, որ յերկնից ճառագայթն, որ պատրաստութիւն լուսոյն, որ կազմութիւն կենացն, ճանապարհ, որ զճանապարհն եցոյց, միջնորդին միջնորդ, մարգարէիցն ծաղիկ, արդարոցն լրումն, // օրինացն կնիք, աւետարանացն սկիզբն, աստբեկոցն պտուղ առաջին: Եւ զի համառօտա-

գոյն ասացից, որ բանիքն մարգարէ և գործովքն առաքեալ, որ շնորհացն մկրտիչ և կոչմանն աւետարանիչ, որ սակս ճգնութեան՝ հրեշտակ և վասն առաքինութեան՝ յառաջընթաց որ յոլով ահա անուամբքն բայց ևս առաւել իրօք, որոյ հասանել առաքինութեանցն յոլովութիւն բանից ոչ կարէ և ոչ զանազանութիւն ճառից նկարագրել զգովութիւն մեծութեանցն: Քանզի զի՞նչ զնորայն մանաւանդ պարտ էր գովել, կամ ընդ որ առաւել զարմանալ, զի՞նչ նախ և ա[ռ]աջին երանել, այլոցն անփոյթ առնելով զանակնկալ յաղթութիւն, զհրաշալի ծնունդն, զխայտալն յորովայնի, յարգանդէ զմարգարէութիւնն, յորովայնէ զաստուածաբանութիւն, որպէս տղայ էլ ով զարարիչն քարոզեաց, բանի փոխ առեալ բան, ողջագործեալ սփոփէր զերկունս կուսին:

256բ. Զգաստացուցանէ զԱստուածածինն ընդ անձին // թերևս ընդդիմաբանելով և ասելով՝ զի՞նչ իցէ այս որ յիս սքանչելիքս, զիա՞րդ առանց առն հարսն, կամ ո՞րպէս մայր առանց առն լինիցիմ, զիա՞րդ ծնցի մանուկ առանց ուրուք զնա սերմանելոյ, կամ ո՞րպէս անախտութեամբ որովայն յղացի, զիա՞րդ ոչ նեղեցի արգանդն զայն որով զամենայն կրելով: Այլ զի՞նչ տղայն Յովաննէս ասաց առ Մարիամ, փոխանակ փողոյ զծօրն առաջի՞ արկանելով զլեզուն. «Օրհնեալ ես դու ի կանայս»¹ քանզի կին հանդիպիս, թէպէտ և զկանանց ո՞չ կրեցես զերկունս ծննդեանն: Կին հանդիպիս, վասն զի առաքեաց Աստուած զՈրդին իւր, որ եղև ի կնոջէ և եմուտ ընդ օրինօք, զի զորս ընդ օրինօքն իցեն՝ զնեցէ, զի մեք զորդեգրութիւն ընկալցուք: «Օրհնեալ ես դու ի կանայս», զի որ ի քեզ զօրհնութիւնս մասնաւորէ, այն որ ի քէն ըստ մարմնոյ, սոյն և ըստ հոգւոյ զանէծսն ցրուէ: «Եւ

257ա. օրհնեալ է պտուղ որովայնի քո»¹: Ո՞վ արդեօք իցէ սա և // կամ ո՞րպիսեօք յառաջեալ փառօք, զի՞նչ անուանելոյ և կամ ո՞րպէս կոչելոյ արժան իցէ: Լույս Դաւթի ի սաղմոս մարգարէութեան ասելոյ. «Օրհնեալ է որ զայլոց է անուամբ Տեառն, Տէր Աստուած երևեցաւ մեզ»²: Այլ արդ առ Յովաննէս բանս դարձցի. սքանչանալով որ քան զսքանչանալ կարողութիւն է և զի ո՞չ իսկ է ամենևին կարելի: Քանզի երբեմն ասէ զՄկրտիչն յանապատի անդ զկերակուրն, զմանկութեան անտիսն, որ յաղագս տանն զսքանչելիսն, զհիացումն ծնողացն, զբնակցութիւն հոգւոյն, զփառաւորեալ պատմութեանն, զհրաշալի կերակուրն: Քանզի գօտեան մաշկեղինաւ զմէջն պնդէր և ստեօք ուղտուցն զքոլորն իսկ ծածկէր զմարմինն, որոյ զգօտին զճգնողն ահա և զօրականն ընդդէմ հրաշալեացն զինեալ պսակազգեստ ցուցանէր: Իսկ ստեօք ուղտուցն զՄկրտիչն առ Քրիստոս նշանակէր զհաղորդութիւնն, և վախճան զմարգարէութեանն զայն ընդունէր բան, եթէ տեսի հեծեալս երկուս // ի ձիս՝ հեծեալ մի յիշոյ և հեծեալ մի յողտու: Զիա՞րդ ձիս ասելով էշ և ուղտ ներքոյ հեծելոցն հանդերձեցեր: Եթէ ոչ ամենայն իրօք ձի ինձ զմարգարէութիւնն յիշատակէ, զի գուցէ և զփոյթ ճգնութեան և զերագութիւնն սուր. հեծեալ ի վերայ իշոյ** և յաւանակի նստեալ եմուտ յերուսաղէմ: Իսկ հե-

¹ Դուկ. Ա. 42:

² Սաղմոս ԸԺԷ 26—27:

* Զեռագրում՝ առ առաջի:

** Զեռագրում՝ իշոց:

ձևով ի վերայ ուղտու զՅովաննէս նշանակէ ոչ միայն ստն ուղտուց
 Լ. ր սգեցեալ, այլ զի և մարգարէ հեթանոսաց, որպէս և զայլ պարս
 մարգարէիցն հանդիպէ: Յաղագս որոյ զայս Հոգին Սուրբ Աստուծոյ
 առ եկեղեցիս հեթանոսաց ի ձեռն Եսայեայ գոչեաց ասելով. «Փոխեա-
 ցէ ի քեզ զմեծութիւն ծովու և ազգաց և ժողովրդոց, և եկեացեն ի քեզ
 երամակք ուղտուց և ծածկեացեն զքեզ ուղտերամակքն Մաղիամու և
 Գեփայ, ամենեքեան ի Սարա եկեացեն»³ քերէլ քեզ ոսկի և կնդրուկ»³:
 Բայց եթէ զինչ վախճանն իցէ, ուսիր, և զփրկութեան Տեառն առցեն
 զաւետիս, արդ այսպէս սպա փառաւորեալ ունելով զպատմութեանն և
 258ա զկերպ/կորն նմանապէս ունէր զհրաշային ասացեալ: Մարախ ասէ.
 և մեղր վայրենի: Մարախ զօրէնսն ասէ, վասն զի մարախն կենդանի
 է՝ լերկ և օղական: Նախքան զվերաթեւելն՝ լերկ, քանզի ի վերայ երկրի
 ուստուտեալ շրջի, ոչ ունելով սլետս թեոց: Իսկ յորժամ վերաթեւեալ
 բարձրացի, յայնժամ իսկ և իսկ լինի օղական: Զոր օրինակ և օրէնք
 լերկ տակս գրոց, իսկ յաղագս հոգւոյն՝ օղական՝ անկատարիցն ան-
 կատար, իսկ զարգացելոցն՝ կատարեալ: Բայց լետ մարախոյն մեղր
 վայրենի ուտէր՝ յօրինացն զաւետարանականն վայելելով սեղան: Քան-
 զի ոչինչ քան զաւետարանական պատուիրանսն է քաղցր: Եւ վայրե-
 նի, քանզի որպէս ի վայրենի եղև մշակեալ, յորում և զկենաց փայտն
 Քրիստոս մշակեաց, զոր Իսահակ մարգարէացեալ յօրհնութիւնսն
 բարբառեցաւ այսպէս ասելով. «Ահա հոտ որդոյ իմոյ իբրև զհոտ
 անդոյ լիոյ, զոր օրհնեաց Տէր»⁴: Արդ սա աւասիկ այսօր զմեզ ի հո-
 258բ զնորականն հրախիւ խմբումն ուրա//խութեան և սեղանոյ: Ոչ որպէս
 Հերոդէս խոստանայ, այլ զնորին հակառակսն փոխանակ արբեցու-
 թեան զապաշխարութիւն պատուիրէ և կանանց օրհնադրէ ողոյէ ի
 տան, թագչել ի սենեակս և նախ քան զքոյրոյն մասամբք առաքինու-
 թեանցն պատկառանքն զարդարիլ: Քանզի պատկառանք կնոջ մայր
 պարկեշտութեան են վարդապետութեան, մի զմարմին ի կաքաւումնս
 շարժել, մի թողացուցանել զանդամսն և խորտակել, մի ձեռովն ճօճել, մի
 քանիքն կախարդել, մի հիւսուլ որոգայթ նորահասակացն, քանզի
 որովք և հեղձուցանենն՝ հեղձանին, և առհասարակ ի միասին լինին
 կերակուր սկզբնաւոր չար վիշապին: Թագաւորաց զգաստանալ հրա-
 մայէ, քահանայից և իշխանաց չարաւորօքն փափկանալ և ըմբել զքա-
 ւականն փախչելով յարբեցութենէ, զի մի ախտացին զոր ախտա-
 ցան Հերովդէս, որպէս զի մի զերդումն ի գինին: Եւ սպանումն գինին
 259ա ուտուցէ և դժնեայ խորխորատ // յայլ միւս ևս դժնեակագոյն խորխո-
 րատինս յարեալ լիցի, զի մի կրեացեն զոր ինչ Հերովդէսն: Քանզի դժո-
 խերասան գիտակցութեամբն խոցոտեալ խղճի սպանմանն, զոր յա-
 ռաջագոյն սպա տպանանեալ էր զՅովաննէս և Քրիստոսի Աստուծոյ
 մարդասիրին փառք յախտանս:

³ Եսայի Կ 5—6:

⁴ Ծննդոց ԻԷ 27:



ՄԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՎԿԱՑՈՒԹՅԱՄԲ, Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉԸ (Դ. ԴԱՐ) ԹԵՎԱՎՈՐ ԽԱՉԵՐ ԷՐ ԿԱՆԳԵՑՑՈՒՄ
 ՂԱՀՈՒՓՄԻՄՅԱՆՑ ԿՈՒՑՄԵՐԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ:
 Մ ԱՅԴ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՆԱԵՎ ՀԵՏԱԳԱ ԴԱՐԵՐՈՒՄ: ԹԵՎԱՎՈՐ ԽԱՉԵՐԻ ԼԱՎԱԳՈՒՑՆ ՈՐԻ-
 ՄԿՆԵՐԻՑ Է ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ԾՐՋԱՓԱԿՈՒՄ ԴՐՎԱԾ ԱՅՍ ԵՋԱԿԻ ԿՈԹՈՂԸ: ԱՅՆ ՀՈՐԻՆՎԵԼ Է ԱՐՑԱՆԻ ՓԱՌԻՍՈՍ
 ՂՈՒՂՈՒՄ, ՌԶԲ (1838) ԹՎԱԿԱՆԻՆ:

ԵՐԱՆԵԼԻ ՈՒՍՈՒՑԻՉ ՀԵՍԻՔԻՈՍ ԵՐԵՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑՈՒ ԿՈՂՄԻՑ ԱՍՎԱԾ
ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄԱՍԻՆ՝

Այսօր Հովհաննեսը մեզ՝ ուրախությամբ գլարձացածներին քերեց տեղեկի հորձանքի մեջ: Հովհաննեսը, որ Գառան ձայն է, Բաճի Որոտում, երկնքի ճառագայթ, լույսի նախապատրաստություն, կյանքի պատրաստություն, ճանապարհ, որ ցույց տվեց շավիղը, որ միջնորդի միջնորդն է, մարգարեների ծաղիկը, արդարների լրումը, օրենքի կնիքը, ավետարանի սկիզբը և առաքյալների առաջին պտուղը: Եվ համառոտ կերպով կասեմ, որ խոսքերով մարգարե է, գործերով՝ առաքյալ, շնորհների մկրտիչ՝ և կոչման ավետարանիչ, որ օգնության պատճառով հրեշտակ է և առաքիճության պատճառով՝ առաջնորդացիկ: Որը, ահա, բազում անուններ ունի, բայց առավել ևս՝ գործեր, խոսքի առատությունը չի կարող ընդգրկել նրա առաքիճությունը և ոչ էլ բազում ճանաչող կարող են նրա մեծության գովքը նկարագրել: Որովհետև նրա ինչն էր հատկապես պետք գովել, կամ ինչն էր ավելի զարմանալ, ինչի՞նչ առաջինը երանի տալ՝ անտեսելով ուրիշների անակնկալ հաղթությունը՝ հրաշալի ծնունդի՞ն, որովայնում խաչատուր՝, մարգարեության՝ արգանից, աստվածաբանության՝ որովայնից, որպես մանուկ հայտնվեց նա, ով արարչի մասին ավետեց՝ խոսքով խոսք փոխառնելով. ողջագուրելով սփոփում էր կույսի երկունքը:

Զգաստացնում է Աստվածածնի, որ թերևս երկխոսում է իր անձի հետ՝ ասելով. «Ի՞նչ է այս հրաշքը, որ իմ մեջ է, ինչպե՞ս առանց այրի հարս, կամ ինչպե՞ս առանց տղամարդու մայր կլինեմ, ինչպե՞ս մանուկ կծնվի, առանց որ որևէ մեկը սերմանի նրան, կամ որովայնը ինչպե՞ս անախտաբար կհղիանա, ինչպե՞ս այն, ինչ բոլորն են կրում, չի նեղի արգանդը»: Իսկ ի՞նչ ասաց պատանի Հովհաննեսը Մարիամին՝ շեփորի փոխարեն իր մոր լեզուն առաջ մղելով. «Դու ես օրհնյալը կանանց մեջ», որովհետև ինչ ես դառնում, թեև չես կրում կանանց ծնունդի երկունքը: Կին ես դառնում, որովհետև Աստված ուղարկեց իր Որդուն, որ ծնվեց կնոջից և մտավ օրենքի տակ, որպեսզի գնի նրանց, որոնք օրենքի տակ են, որպեսզի մենք որդեգրություն ընդունենք: «Օրհնյալ ես դու կանանց մեջ», որովհետև նա, որ քեզ օրհնություն է բաշխում, նա է, որ քեզնից է մարմնով, իսկ հոգով անեծքներն է ցրվում: «Եվ օրհնյալ

է քո որովայնի պտուղը»: Ո՞վ է արդյոք սա, կամ ինչպիսի՞ փառքերով ճոխացած, [նրան] ի՞նչ պետք է անվանել, կամ ինչպե՞ս կոչվելու արժանի է: Լսիր Դավթի ձայնը սաղմոսի մարգարեության մեջ. «Օրհնյալ է նա, որ գալու է Տիրոջ անունով, Տեր Աստված երևաց մեզ»: Իսկ այժմ շրջենք խոսքը Հովհաննեսի մասին. սքանչանալով ավելի քան հնարավոր է սքանչանալ, և մի՞թե ամենևին կարելի չէ: Որովհետև երբեմն Մկրտչին անվանում է անապատի կերակուր, մանկության ավետիս, և պատմում է տան հրաշքների, ծնողների հիացման, հոգու բնակության, փառավորված պատմության, հրաշալի կերակուրի մասին: Որովհետև կաշվե գոտիով էր մեջքը ամրապնդում և ուղտի մագով էր ծածկում ողջ մարմինը, նրա գոտին, ահա, ճգնողն ու գորականը հրաշալիքների դեմ զինելով՝ պսակազգեստ էր ցույց տալիս: Իսկ ուղտերի մագը ցույց էր տալիս Մկրտչի հաղորդությունը՝ Քրիստոսին, և մարգարեության վերջում այդ խոսքը ուներ, թե՛ երկու ձիավոր հեծյալներ տեսա, մեկը էջ նստած և մյուսը՝ ուղտ: Ինչպե՞ս ձիեր ասելով՝ հեծյալների տակ էջ և ուղտ դրեցիր: Մի՞թե ոչ այն [պատճառով], որ ձին ամեն ինչով ինձ մարգարեություն է հիշեցնում, որպեսզի ցույց տա ճգնության ջանքն ու սուր արագությունը. էջի վրա հեծած և ավանակի վրա նստած մտավ Երուսաղեմ: Իսկ Հովհաննեսին ուղտի վրա հեծած է նկարագրում, ոչ միայն որովհետև ուղտերի մագ էր հագած, այլ որովհետև մարգարե էր հեթանոսների, ինչպես որ մարգարեների այլ խմբեր են լինում: Որի համար Աստուծո Սուրբ Հոգին հեթանոսների եկեղեցում այս բանը գոչեց Եսայի [մարգարեի] քերականով ասելով. «Քեզ կփոխանցի ծովի, ազգերի և ժողովուրդների հարստությունը, և կգան դեպի քեզ ուղտերի երամակներ և կծածկեն քեզ Մադիամի և Գեփայի ուղտերի քարավանները, բոլորը Սաբա կգան՝ քեզ ոսկի և կնդրուկ քերելու»: Բայց թե ինչն է վերջը, իմացիր. Տիրոջ փրկության ավետիսը կառնեն: Արդ այսպես փառավորված ունենալով պատմությանը նույնպես և հրաշալի կերակուրը. մարախ է ասում և վայրի մեղր: Մարախ ասելով օրենքը [նկատի ունի], որովհետև մարախը կենդանի է, ամազ և օղային: Նախքան թռչելը լերկ է, որովհետև հողի վրա ուստոստելով է շրջում՝ առանց թևի կարիք ունենալու. իսկ երբ թռչելով բարձրանում է, այն ժամանակ խկապես օղային է դառնում: Ինչպես օրի-

¹ Թարգմանական որոշ անհարթություններ պետք է բացատրել բնագրի հնարավոր աղավաղումներով:

նակ օրենքը լերկ է գրությամբ, իսկ հոգու համար օղալին է՝ անկատարների համար՝ անկատար, իսկ զարգացածների համար՝ կատարյալ։ Բայց մարախից հետո վայրի մեղր էր ուտում, վաչելելով ավետարանական օրենքների սեղանը, որովհետև ոչինչ ավետարանական պատվիրաններից ավելի բաղցր չէ։ Եվ վայրի [է առում], որովհետև ինչպես վայրին մշակվեց, նույնպես և Քրիստոս մշակեց կենաց փնտրը, որ Խառնակը մարգարեանալով օրհնությունների մեջ բարբառեց՝ այսպես ասելով. «Ահա իմ որդու հոտը, մեծ նախրի հոտի պես է, որ օրհնեց Տերը»։ Արդ սա այսօր ահա մեզ հրավիրում է հոգևոր ուրախության և սեղանի հավաքի, ոչ ինչպես Հերովդեսն է խոստանում, այլ նրան հակառակ՝ արբեցության փոխարեն ապաշխարություն է պատվիրում և հրամայում է կանանց մնալ տանը, թաքնվել սենյակներում և բոլորից ավելի սուաքինությամբ և ամոթխածությամբ զարդարվել։ Որովհետև կնոջ պատկառումը պարկեշտության վարդապետության մայրն է՝ կաքավելիս մարմինը չշարժել, անդամները չդողացնել և

չկոտրատել, ձևով չճոճել, խոսքերով չկախարդել, նորահասակների համար որոգայթ չհյուսել, որովհետև ինչով որ խեղդում են, կխեղդվեն, և բոլորը միասին կերակուր կդառնան առաջին չար վիշապին։ Թագավորներին հրամայում է զգաստանալ, քահանաներին և իշխաններին՝ չափավորությամբ մեղմանալ և խմել բավարար չափով՝ փախչելով հարբեցողությունից, որպեսզի չախտավորվեն, ինչպես ախտավորվեց Հերովդեսը, որպեսզի գինով [սուտ] չերդվեն։ Եվ գինին սպանություն է ուսուցանում և դժնդակ խորխորատից մեղում է մյուս ավելի դժնդակ խորխորատին, որպեսզի չկրեն այն, ինչ Հերովդեսը [կրեց], քանի որ անսանձ գիտակցությամբ խոցոտված՝ նախ խիղճը սպանեց, ապա սպանեց Հովհաննեսին։

Եվ մարդասեր Քրիստոս Աստծուն հավիտյան փառք։

Գրաբարից թարգմանեց՝

Հոգևոր Գեմարանի դասախոս

ԵՐՎԱՆԴ. ՄԵԼՔՈՆՅԱՆԸ

